**Փոքր-Ասիական** ուրիշ ազգութիւնների հետ (ինչպէս Թիւնացիք, Բիւթանացիք, Տրովացիք ևայլն) կազմում են մի առանձին ճիւղ հնդեւրոպական լեզուախմբի մէջ:

Պերագները նախայունական բնիկներն են և պատկանում են ոչ հնդեւրոպական մի ցեղի, որ յետոյ յունաց տիրապետութեան եւ քաղաքակրթութեան ազգեցութեամբ ոչնչացաւ: Նրանց ցեղակից, յամենայն գէպս ոչ հնդեւրոպական մի ցողովուրդ էին նաև կրետացիք, որոնց գաղթական հատուածներն են ըստ Հերոդոտոսի: Լիւկիացիք և Կարիացիք: Այս երկաւսին ցեղակից են նաև Միւսիացիք եւ Ալւգիացիք: Թէ այս և թէ միւս ցեղերի ծագման մասին լաւագոյն փաստերը պիտի գտնէինք լեզուական մեացորդների մէջ. բայց զրանք այնքան քիչ և աննշան են, երբեմն էլ բոլորովին անյայտ, որ անկարելի է զրանց քննութեամբ որ և է եղբակացութեան յանդիլ: Կրէմերը, իր վերոշիշեալ աշխատութեան մէջ այս երկրորդ խմբի լեզուները միացնելով իրար հետմարում է մի ծագումից որ կոչում է Փոքր-Ասիական (օչ հնդեւրոպական): Հեմայ սովորութիւն է կոչել Ասիանական: Ընդհակառակը Բուզգէ (Լիւկիշէ շտուգիերն) զանում է որ տրըւած փաստերը անբաւարար են և թէ այդ լեզուները աւելի մերձաւոր են հայերէնի և հետեաբար հնդեւրոպական են:

Ահա այն ժողովուրդները, որոնց հետ հայերը այսպէս թէ այնպէս յարաբերութեան մէջ մտած պիտի լինէին, նախքան Հայաստան հասնելը: Այժմ պէտք է քննել թէ նախահայերը Եւրոպայից մեկնելիս մենամկը են դուրս եկել, թէ վերսիշեալ ժողովուրդներից մէկի կամ մի քանիսի հետ՝ ինչպէս պարսիկները հնդիկների հետ, կամ իտալական ժողովուրդները կելտերի հետ), որոնք մեալով ճանապարհի այս ու այն կողմում, ասպարէզ առւին հայերին իրեն յառաջընթաց իմրի, թափանցելու մինչև Հայաստան: Քննել այս հարցը նշանակում է միաժամանակ քննել թէ ի՞նչ ցեղակցական կապ կայ հայերի և վերսիշեալ ժողովուրդների, կամ որ նոյն է, հայերէնի և նրանց լեզուների միջև:

Յոյն մատենագիրներից Հերոդոտոս և Եւգոկափու հայերին համարում են Փոխ-

գիական սերունդ կամ հատուած, և լեզով էլ նոյն կամ նման: Հերոդոտոս իր Պատմութեան մէջ (կ. 73) հայերին կոչում է Փրիւգոն ապօյկոյ հատուածք փոխեցացոց: Իսկ Եւգոկափու իր Աշխարհագրութեան մէջ ասում է թէ «Հայք սերունդք են Փոխեցացոց և լեզուաւ բազմօք փոխեցերն խօսին» (= Արմենիոյ գի առ մեն զենոս էկ Փրիւգիան կայ տե ֆոնէ պոլլա փրիւգուսի): Նոր քննիչներից Կրէմերը իր վերայիշեալ աշխատութեան մէջ, էջ 208, եւ Մեյեր, «Գեշիլիմթէ գես ալտերտումս» 1893, հա. Բ. էջ 41, 58, գտնում են որ հայերը Թրակացոց ու Փոխեցացոց հետ կազմում են մի՛ ցեղ, նախապէս բնակւում էին Թեսալիոյ հիւսիսային կողմում, խօսում էին փոխեցերէնի ազգական մի լեզու, և Ն. Ք. երրորդ հազարամետին մասերով (Բիւթանիա և այլն) անցնելով եկան Հայաստան: Բուզգէ (Լիւկիշէ շտուգիերն) աւելի մեծացրեց Խընդիքիը և բոլոր Փոքր-Ասիական լեզուները հայերէնի մերձաւոր, հետեաբար հնդեւրոպական և ցեղակից գուրսութերաւ: Վերջապէս Ենսէն (Հիթիթիը ունդ արմենը Շարաստուրի, 1898) կարգալով Հաթերի թողած զանազան պատկերազիք արձանագրութիւնները, որոնց բանալին անյայտ էր, հետեւցըրեց թէ հաթերը նախահայերն են, թէ նոյնիսկ այդ երկու անունները միւսնոյն բառերն են և թէ հաթ-հայերը Եւրոպայից դուրս գալուց յետոյ՝ երկար ժամանակ բընակուել են Կիլիկիայում, հիմնել են այնտեղ սեփական կուլտուրա, գիր ու զըրականութիւն, որից յետոյ անցել են հաստատուելու արգի Հայաստանում:

Փոխեց-հայկական ցեղակցութեան մասին խօսում են նաև Հիւրշման, Մեյյէ, Տաշեան և Մարքվարդ: Հիւրշման ԿՀ 23, 1877, էջ 48-49, խօսելով հայ-փոխեցական նմանութեանց վրայ, տատանեում է վճիռ տալ, թէև հակամէտ է ընդունելու թէ փոխեցացիք և հայերը մօտիկ ազգական էին և միւս Փոքր-Ասիական լեզուների հետ մի ընտանիք էին կազմում: Եսոյն հեղինակը հայերէն քերակ. 1,405-6, գըտնում է որ փոխեցերէնից մանաւանդ թըրակերէնից մեզ հասած բառերը այնքան քիչ և աննշան են, որ կարելի չէ դրանց

քրայ հիմնուելով հայերէնի ցեղակցութեան մասին դրական վճիռ դուրս բերել . ուրիշ խօսքով եղածը ոչինչ չի ասում: Մեյլէ իր քերականութեան ուրուագծի մէջ, էջ ժԳ, և կենտրոնական Աստվայում գտնուած նոր հնդեւրոպական լեզուներ աշխատութեան մէջ, Փարիզ 1912, էջ 7, ասում է թէ առանց վճռական պատճաների համեմատուած են հայերէնը փոխվերէնի հետ, որ հազիւ ծանօթ է: Տաշեան, Աւսումն գտնական հայերէն լեզուի Ա. էջ 123-173 քըն նութեան առնելով մեզ աւանդուած թրակերէն և փոխվերէն բառերը և համեմատելով հայերէնի հետ, գտնում է որ այդ երեքը մէկ ճիշդ համարելու բնաւ հիմք չկայ: Թրակերէն և փոխվերէն բառերը աւելի նման են յունարէնի կամ արիական լեզուներն, քան թէ հայերէնի: Մարքարդ, Դի ենաշթենունգ, էջ 4, ասում է որ թէ նապայն հայերէն լիշտակարանների և փոխվերէնի միջն 12 զարերի հեռաւութիւնն կայ, բայց և այնպէս բնաւ նմանութիւն չկայ հայերէն և փոխվերէն լեզուների միջն:

Հարցի լուծումը կախուած լինելով հայերէն, փոխվերէն և թրակերէն բառերի համեմատութիւնից, որի վրայ հիմնուել են նաև նախորդ քննիչներն, տանք այսուղ մի խոնդը թրակերէն ու փոխվերէն բառերի ցանկը.

թամ. թիվ = նախական	Փոխվ. վեճութիւն = թիվ
թենի = նախկի	վիճութիւն = նոր
դրաւու = զարեջուր	զրաւու = ուժի
թիվ նախական = կիրառ	զրավութիւն = նախական
վիճութիւն = առանձին	զրաւու = զայլ
ներքու = ուղ	ենջիւ = ողիք
նիւսու = նիմեն	ենիր = եւս
սիմեն = զարեջուր	զերիխու = կողումք
սիրութ = զանոնի	զեմեր = երիխ
Փոխվ. պրեթես = թերէ	զեւմեն = արիւն
աղէն = մօրմէ	իսու = ով ար
արման = կրիս	իէ = եւ
Բազարու = Ասումնու	մանիր = զեղեցիի
անօր = մարդ	նորու = վերեւ
բնոնի = կին	սեմուն = սմին
բային = բազուուր	մատար = մարդ
ընդու = չուր	ինուման = իբասաւագարանու
գարսու = նպօր կին	կիւրան

Առաջ մի փոքր արձանագրութիւն ևս փոխվերէն լեզուով.

Իսկ նի սեմուն կնումանեյ կակուն ազակես, եփինեկի-մենս եիսու = ով որ սմին զերեզմանին վնաս կտայ, անթեսալ լիմի:

Ինչպէս տեսնում ենք, այս բոլոր բառերի և նրանց հայերէն համանիշների մէջ ոչ մի նմանութիւն չկայ: բառերի մեծ մասը ակներեւ կերպով հնդեւրոպական են, բայց կապում են ուրիշ լեզուների հետ և ոչ հայերէնի: ինչպէս՝ Բեդու = ուռւս, վազա, կիւ = լու, քէ, յն՝ կայ, գորգում = ուռւս, գորոգ, բենզ = զերմ: բինգեն և այլն: Հայերէնի չափազանց նման է սեմուն = ամին, բայց այսքանը բաւական չէ ընդունելու համար երկուսի մէջ անձուկ ցեղակցութիւն:

Սակայն յոյն պատմագիրների վկայութիւնները չափազանց որոշ են թրակերէն փոխվական և հայերէնի ցեղակցութեան համար, որի կողմէ են նաև Արմէն ձեռք զանազան տեղական անուններ թրակիայում, Փափազիայում և Փոքր-Ասիս հիւսիսային մասերում: Աւսուի հաշտեցնելու համար յոյն մատենագիրների տուեալները իրականութեան հետ՝ կարող ենք ասել թէ հայերը թրակո-փոխվականից անկախ մի ցեղ են, նախորդու բնակունել են թրակիոյ ուսկաններում այդ ժողովուրդների հարեւանութեան մէջ, թրակո-փոխվական շարժումից առաջ, կամ հենց զրա պատճառով թրակիայից անցել են Փոքր-Ասիս, իրենց յետամենաց մասերը չփաման մէջ են եղել փոխվացոց հետ և թերեւս ընդունել են նրանց լեզուն, բայց բուն յառաջընթաց մասը՝ որ վերջապէս եկել հասաւատուել է Հայաստանում, որ և է կապ չունի նրանց հետ:

Հայոց հայերէնիքը թրակիա զնելու տեսառութեանը հաստատում է այժմ բոլորովին մի այլ ճանապարհն, այն է հայոց արեան քննութեամբ: Ահա այս մասին եւզած քննութեանց համաւասար ամփոփումը:

Արեւու բաղկացած է երկու մասից՝ չինուկ և կարմիր գնդակներ: Երբ ամանի մէջ մի քիչ արիւն հաւաքենք ու պահենք, կը տեսնենք որ քիչ յետոյ նա կը սառչի և երկու մասի կը բաժանուի: Տակին կը նատի հաստատուն մասը, որ կարմիր զընդակներն են, երեսին կը թայ զեղնորակ մի ջուր որ չինուկն է:

Երբ երկու տարրեր անձերի արիւնը խառնենք իրար հետ, հետեւալ տարօրինակ երեսովը կը նկատենք: Ամանց չինուկն ու կարմիր գնդակները մինչ մէջ անզթար կը մնան, այսինքն երկու արիւնները նոյնա-

անսամկենակը շիճուկը լուծում է միւսի կարմիր գնդակները. կամ շիճուկը լուծիչ չէ, իսկ կարմիր գնդակները լուծում են. և կամ շիճուկը լուծիչ չէ, իսկ կարմիր գնդակները անլուծական:

Գիտունները քննել և գտել են որ արեան գնդակների այս լուծական կամ անլուծական լինելու չափը ի՞նչպէս անհատից անհատ, նոյնպէս և ազգից ազգ տարրերում է: Վերածերակ լուծականութիւնը չորս խմբի, ահա թէ խերաքանչիւր ազգինչ տոկոս է ներկայացնում:

Յեղային յատկանիչ է կոչում այն թիւը որ առաջնում է ա և զ խմբերի գումարը բաժանելով թէ զ խմբերի գումարով:

	Ա	Բ	Գ	Դ	Ե
Անգլիացի	43,4	7,2	3	46,4	4,5
Ֆրանսիացի	42,6	11,2	3	43,2	3,2
Գերմանացի	47,3	11,3	5,7	36	3,1
Ամերիկացի	40	7	10	43	2,9
Իտալացի	38	11	3,8	47,2	2,8
Աւստրիացի	40	10	8	42	2,6
Հելլունդակ	40	12,4	7,8	39,2	2,6
Բուլղար	40,6	14,2	6,2	39	2,3
Սերբիացի	41,8	15,6	4,6	38	2,29
Չոյն	41,6	15,2	4	38,2	2,25
Ռումինացի	40,93	14,54	7,97	36,55	2,17
Հայ	40,3	16,6	6,8	36,3	2,01
Թուրք	38	18,6	6,6	36,8	1,77
Հունգարացի	38	18,8	12,6	31	1,6
Լին	37	20,8	9,5	32,5	1,55
Արար	32,4	19	5	43,6	1,55
Հերաց սպան	33	23,7	5	38,8	1,3
Ռուս	31,2	21,8	6,3	40,7	1,3
Զիմացի	25	34	10	30	0,8
Անգլացի	22	28,4	7,2	42	0,8
Հնդիկ	19	41,2	8,5	31,3	0,5

Համեմատութիւններից երեսում է որ ա խմբի տոկոսը բարձր է եւրոպայում, աստիճանաբար նուազում է յառաջանալով դէպի արևելք՝ Ասիա և Աֆրիկէ, որոնց մէջ թէ խմբի տոկոսն է գերազանում, հետեւաբար որ և է ժողովուրդի ա տոկոսը որքան բարձր լինի, այնքան նա մօտ է եւրոպականին նմանապէս ցեղալին յատկանիչը եւրոպայում 2-ից բարձր է, իսկ Պոլսից դէպի արևելք հետզեհետէ լինում է: Հունգարացիք թէն եւրոպաքանակ, բայց լինելով ծագմամբ ու զբովինական ժողովուրդ, իրաւամբ ունին 2-ից ցածր յայտանիչ:

Եթէ այժմ առնենք հայոց տոկոսները,

կը տեսնենք որ հայերը գանւում են եւ բազական ժողովուրդների մէջ եւ իրենց տոկոսը նոյնիսկ աւելի բարձր է քան լիների և ուսուների տոկոսները, Մեր ազգային յայտանիշը ցայց է տալիս որ մեր տեղը գտնուում է Պոլսից դէպի արևելուտք, Բալկաննեան ժողովուրդների կողքին, այն է լեզուարանութեան ակնարկած Թրակիան:

Փափազական հարցից շատ աւելի զըժւար է Փոքր-Ասիական միւս լեզուներից հարցը, քանի որ այդ լեզուներից շատ աւելի քիչ բան գիտենք կամ նոյնիսկ ոչինչ չգիտենք:

Կապաղովկացոց լեզուի համար մի հետաքրքրական աշխատութիւն ունի Կարութիգէս, «Գլուխարփոն Սիւնկրիտիկոն և լինուկապագովկիկոն լիքսէսն», Զմիւռնիա, 1885: Այս աշխատութեան մէջ հեղինակը հաւաքում է այն բոլոր բառերը, որոնք գործածական են Կապաղովկիկոյ արդի յունաց բարբառում, բայց յունարէն չեն և ենթազրում է որ դրանք հին Կապաղովկացերէնի մացորդներն են: Արդ՝ այս բառերը բոլորին նոյն են հայերէնի հետ, ինչպէս կալակոնի = գայլիկոն, պեյտախի = փայծախս, մարուկիա = մօրուք, մուզիս = մոզի, պագարցի = բաղարջ և առյն: Սակայն այս բառերը հայերէնից փոխառութիւն են ըստ իս և այն էլ ուշ ժամանակի փոխառութիւն, քանի որ յետին ձայնաշրջութեան համեմատ են. հմմտ. յատկապէս պազարձի, ուր պ-բ, գ-լ և ց-ց: Արանից հետեւում է որ յիշեալ բառերը չեն կարող ապացուցանել ո՛չ Կապաղովկացերէնի հնգերոսական լինելը և ո՛չ էլ հայերէնի հետ ցեղակցութիւնը:

Ամենից աւելի աղմուկ հանեց գիտական աշխարհում հաթեան-հայկական հարցը: Ենսէն իր բոլոր արգիւնքները համաձայն գուրու բերելով հայ լեզուարանութեան տուեալների և ձայնական օրէնքների հետ՝ դրանով իր տեսութիւնը ընդունելի ընծայեց բոլորին: Հիւրշման թէն չէր արտայայտուած հրապարակաւ, բայց համամիտ էր ենսէնի. Տաշեան իր Ռւսումն Դասական Հայերէն լեզուի աշխատութեան մէջ համամիտ և պաշտպան գուրս եկաւ. մեր երկրարգական գրողները, յախուռն յափշտակութեամբ ընդունեցին նոր տեսութիւնը, հա-

կառակ այն հանգամանքին, որ՝ ինչպէս Մելլէ ասում է, գտնուած նիւթը բաւաշկան չէր վճռելու հայերէնի ցեղակցութեան հարցը, և առ առաւելն կարող էր ցոյց տալ որ հաթերէնը հնդեւրոպական լեզու է:

Բոլորովին նոր և անսպասելի յայտնութիւններ գուրս եկան վերջերս: 1906 թուին Հօւզո Վինքլէր գերմանացի գիտունը պեղումներ կատարեց հաթերի Հաթթուշաշմայրաքաղաքի աւերակներում (այժմ Տուզագքէօյ), Անդորրայից 145 կիլոմետր արեւելք) և գտաւ հաթեան թագաւորների պատարը, հաթեան մեծագոյն աստուծոյ մեհանը, մի մատենադարան՝ որ հիմնուել է Ե. Ք. 1300 թուին և յետոյ զարձել հաթեան պետական արխիւս: Այս բազորի մէջ երեան եկան մեծ քանակութեամբ, մինչև 10,000 կտոր թրծուն կաւէ տախտակներ, ծածկուած արձանագրութեամբ և Ամէն մի տախտակի երկու երեսը զրուած է և ունի 40-80 և մինչև 120 տող. զրանից հասկացում է թէ ինչպիսի մեծ նիւթ է երեան հանուած հաթեական պատմութեան համար:

Պրոգայի համալուարանի չեխս պրափ. Հրոզնի ձեռնարկեց լուծել հանելուկը: Բարերախտաբար արձանագրութիւնները զրուած էին ոչ թէ հաթեական պատկերապիր անձանաթ գրութեամբ: այլ ասորեսուննեան բնեսագրերով, ուստի և առաջին անդամից հեշտութեամբ կարդացուեցին: Ի՞նչ վերաբերում է զրուածքի իմաստը հասկանալուն կամ թարգմանելուն, այսուղ մեծագոյն սկզնութիւնը մասսացին զալափարագրերը և հաթեան սումեր-աքադեմէն մի բանարան՝ որ զանուել էր նոյն արխիւսմ:

Հրոզնին ասում էր որ ի՞նքք ուրիշ շատերի նման նախապէս արամագրուած էր գտնելու ոչ-հնդեւրոպական մի լեզու. բայց իր սպասածի բոլորովին հակառակը գուրս եկաւ:

Մի լեզու, որտեղ վագար նշանակում է ջուր, կուիս նշանակում է որը, և կուիդ նրա չեզոքն է, մի լեզու՝ որտեղ բայց խոնարհում է եամի, եասի, եազի և այն, չի կարող հնդեւրոպական չլինել: Հրոզնին անցաւ Պոլիս և 5 ամիս աշխատելով թանգարանում պահուած քարերի վրայ, ման-

րակրկիտ քննութեան ենթարկելով ամէն մի բառ, գտած ու վերլուծած ամէն մի գաղտնիքը հազարաւոր օրինակներով ու վկայութիւններով հաստատելուց յետոյ, վերջապէս բոլորովին վստահ իր զիւտի վրայ, համարձակուեց հազորդել գիտական աշխարհին: Իր այս առաջին յայտարարութիւնը հրատարակեց 1915 թ. Դեկտեմբերին, որին հետեւ Դի օպրակի դեռ ներիբ ստուար աշխատութիւնը, որ հաթեան լեզուի ամբողջ քերականութիւնն ու համառօտ բառարանն է (Լայզցիկ 1917):

Իր գիւտն անելուց յետոյ, իբր փորձ Հրոզնին Պոկսեց թարգմանել առաջին անգամ 7 մեծ արձանագրութիւնն, որոնց խւրաքանչիւրն ունի 150-300 տող, կրօնական ու պատմական բովանդակութեամբ:

Երկու փորձերն էլ չատ յաջող էին, Հրոզնիի վերլուծութիւնը այնպէս ճիշտ էր, որ ոչ միայն նոյնիսկ սկեպտիկ գիտունների կողմից ընդունելութիւն գտաւ, այլ և նորանոր փաստերով հաստատուեց ու վաւերացուեց: Այսօր բաւական մեծ թիւ են կազմում այն գիտունները, որոնք դաշտում են հաթերէնով և ունին արգէն զանազան աշխատութիւններ: Յիշենք ի մէջ այլոց ֆորբեր, Յոաննէս Ֆրիզերիին, Դուցէ, Զոմմեր են. հիմնուեց մի նոր գիտութիւն արեւելքի պատմութեան և յատկապէս հնդեւրոպական լեզուարքանութեան մէջ, այն է հաթեարանութիւն:

ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Վերջը յաջորդում)

## ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Աւելին՝ Միւրիոյ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Պաշտօնաթեարթը, իր 1940-ի Օգոստոս Անդամանեմբեր - Հոկտեմբեր միացեալ Թիւին մէջ, Մեծի Տան Կիլիկիոյ Վէճ։ Պետրոս Սարանեան Կաթողիկոսի մահուան առթիւ իր ցաւակցութեան վերջ, կը մազմէ նոյնպէս որ «իւութով հասնի այն երջանիկ օրը ուր վերցուած ըլլալով իսպառ ամէն պատճառ ու պատճառանք բաժանումի», Հայ ազգը վերապատճ պիտի ըլլայ իր ամբողջական միւութիւնը իրը մէկ ընտանիք, մէկ սիրու մէկ հոգի ի գիրք Քրիստոսի միակ Եկեղեցւոյն ուր զրուած է առ յաւէտ բօլոր ազգերու և ցեղերու համար անխոտիր այն Ավելի անսասան, որուն վրայ մեր սուրբ Հայութին ալ բարձրացուցին երբեմն իրենց զաւանանքի պահով խորանը։

Հայու, 1940-ի նոյեմբեր - Դեկտեմբեր թիւով, կը յայսնէ Աւելին իր նորհակալիքը, Կաթողիկոսի մահուան և տեղապահի ընտրութեան ասիթներու միւոյն ցաւակցականին և միւօին եղած չնորհաւորութեանը համար, և կը յաւելու թէ ճիշդ չ։ Աւելին վերոյիշեալ մէջըրուած մաղթանքը ի մասին Հայ Եկեղեցւոյ այդ ալօթքը պարագն ընել անոնք՝ ուր որոշ պատճառներով Հայաստանին Մայր Եկեղեցին բանուած են, և կը հուատան թէ անսասան վէմը մասնաւոր տեղ մը առփոփուած է։

Այս շատ իրաւացի նկատողութեան պատճառաւ Աւելինը իր 1940-ի նոյեմբեր - Դեկտեմբեր թիւին մէջ զբանս ուղիղ սիրէ Տէրոյ խորայրով «անհարի» և «անսպայ» հ'օրակէ Հայուն ընթացքը ուր չուզեր մասնակցիւ իր ալօթքին, որ բոլոր քրիստոնեայ, ընդ որու և Հայ Եկեղեցւոյ ալօթքն է։ Յետոյ Կ'ընէ Կարգ մը իրեն միայն վայել խորհրդաւութիւններ և պարսաւներ, վերջացընելով իր այս մեղաղքականը Եկեղեցին և Եարականը բնուած վկայութիւններով, պակցուցանելու համար թէ Պետրոս է Եկեղեցւոյ հիմքը, թէ վերջապէս Հայ Եկեղեցին Հռովմէն ընդունած է իր հաւատառքը, և այս բոլորը՝ ասոնք ըսելու համար միայն։

Հոս չենք ուզեր անզրագառնալ այն պատճառներուն, որոնք, Բ. զարէն սկսեալ, յաւակնութեան մէկեցին Հռովմէն պապերը ինքզինքնին գերիշխան նկատելու, ոչ ալ կ'ուզենք Հռովմէն Եկեղեցին աւանդութեան ստուգութիւնը կառկածի ենթարկել, անոնք որ գիտեն պատճառ թիւնը, և մասնաւոնք չեն հասկնար վայն իրենց հաշուոյն միայն, ծանօթ են Եկեղեցւանց։

Հակ այս վարդապետական մեկնութիւնները, որոնց վրայ յենլով յառաջ բերին իրենց վերիշխանութեան պացոյցները, և զես կը բերեն Հռովմէն բանանայագետները, ընդ որու և Աւելին, իրը թէ Տէրը միայն Պետրոսին ըսռաւ պատճառ կ'ու և ի վերայ այդը վիմի չինեցից կեկեղեցին

իմց, այդ բոլորը նորահնար բացատրութիւններ էին առաւելապէս եւ գարու մէջ ներշնչուած՝ երբ կ, Պոլսոյ պատրիարքներ, իրեւ կայսրութեան երկորդ մայրաքաղաքի եպիսկոպոսներ, կուղէին հաւասարապատիւ զիրք մը ունենալ Հռովմէն Պապին հետո Աւելին պէտք է զիտնայ որ ո՞չ ի հնումն, ոչ ալ յետոյ, Պապը չկրցաւ ամէն տեղ տարածել իր իշխանութիւնը։ Հռովմէն զատ միւս չորս պատրիարքութիւնները, Արեւելքի աղջապին Եկեղեցինները, նոյն իսկ Ուրեմուտքի մէջ Միլանի, Ագուիլի և Խաւեննայի թեմերը չէին ընդուներ այս գերիշխանութիւնը։ Յետոյ՝ չառ զօրաւոր էր սա գաղափարը թէ առաքելական քարոզութեամբ հիմուած աթոռները կրնային անկախ կառավարութիւն, առանց կպատակելու նախանդի զըլիսաւորութիւն, քաղաքական սկզբունքի մը համակերպելու սիրոյն։

Գարով Հայ Եկեղեցւոյ նախնական անկախութեան ինդիքին, հաստատ է անոր առաքելական աւանդութիւնը, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի քառողջութիւնը ոչ չառվմի Պապին թոյլատրուած էր, ոչ ալ Կեսարիոյ եպիսկոպոսէն։ Զռուազրութիւնը լուսպատճեան մեռնաղութիւնը կը գոր ընդունեց Ա. Գրիգոր, հպատակութեան յանձնառութիւնը մը չէր կրնար ըլլաւ, վասն զի երկիրը որուն կաթողիկոս կը կարգուէր լուսաւորիչ, ունեցած էր նախապէս արգեն իր քահանայագետական ձեռնաղութիւններն ընորով թագեռ Առաքեալին միջոցաւ, զգբախտ պարագաներու բերումով խղուած, եղածը պարզ նորոգում մըն էր միայն։ Հայաստանեաց Եկեղեցին ժամանակ մը մատոյց այս մեծարան ըլլ կեսարիոյ Աթոռին, բայց երբ զգաց այս վերջնոյն յաւակնութիւնները տէր կանցնեցաւ իր անկախութեան, և Ա. Սահակէն առաջ արգեն գաղրած էր Հայ Կաթողիկոսներու կեսարիոյ ձեռնաղութիւն ընդունեալու սովորութիւնը։ Անոնք որ տեղետկ են Հայ Եկեղեցւոյ պատճութեան գիտեն թէ Քաղկեդոնի ժողովին առաջ մեր Եկեղեցին ոչ թէ Հօսովմէի գանին, այլ Յունաց Եկեղեցին հետ յարաբերութեան մէջ էր։

Անկէ յետոյ ազգային գոյութեան հարցը ըստիպեց որ Հայաստանը երկար ատեն փակէ իր գուռները ամէն ոսնազութեանց առջև, սակայն սպառնալից եր քաղաքական աշխարհը։ Կ'իլիկեան իշխանութեան ըլլանին քաղաքական նըպատակներով զարձեալ կը սկսի միութեան հարցը և կը վերջանայ արևելան հերձաւած։

Եկեղեց ուզեր այսչափն ալ ըսել, սակայն մարդկը կան սրոնց համար ամէն ինչ նոր կը սկսի, երբ կամովին անգիտանալ կ'ուզեն այն ամէնը, զոր պարկեշտ հասկացողութիւնը պէտք չէ թոյլ այս ինքզինքնին մոռնալու։

Աւելին՝ «անհարիկ» և «անուղայ» կերպով, իրեն աւելի կը պատշաճն Հայու հասցէին իր գործածած բառերը, հնեցնել կը փորձէ պապական հինացած յանկերգը, ըսել ուզելով թէ Յիսուս իր Եկեղեցին միայն Պետրոսի վրայ հիմուած է, թէ այն Եկեղեցինները, մէն ըլլալով Հայ Եկեղեցին, որոնք Պետրոսի վրայ հիմուած չեն՝ երբ ձուածող են։ Սակայն Հայ Եկեղեցին ընաւ չէ

դազրան և չի գաղրիր Քրիստոսի Մի, Ընթանաւական և Առաջնական Առարք Եկեղեցւոյ մաս համար առամ ըլլալէ . և կը մնայ Քրիստոսի Ժիշելուական Եկեղեցին մէջ Յորոք այն Եկեղեցիները ուրուք Կ'ընդունին տիեզերական առաջին նույն ժա- գավարը . և կը դաւանին անոնցմէ խմբագրուած ու հաստատուած Հաւատամբը՝ նոյն ինքն Հաւա- տամբի մէջ եղած Մի, Ընթանական և Առաջնականը, Առարք Եկեղեցւոյ մէջ են :

Յաւալի է որ Աւետիք զասարանային այս իրա- զամբանելը ըմբռնել չուզեր, և կը քաշընէ քա- ցարութիւնները որոնք զաւրկ են չուրջ մտածո- կութիւնէ : Բայց Հառամձեական Եկեղեցւոյ յարած մեր հայ Եղբայրներուն, Լուսութքչն մինչեւ Շնորհալին հայուն, Հայ Եկեղեցւոյ ըոլոր նշանաւոր հայրապետները էկաթոլիկ եղած են : Գաւա- կունելի Զամշեանին սկսեալ մինչև Աւետիք երա- նելները արագու ըմբռնած են, և աշխատած են ու Կ'աշխատին տակաւին այրակա ալ ներկա- յացնել :

Մազմանքը զար Աւետիք Կ'ընէ՝ կը վերաբերի աւելի Հայաստանեայց Եկեղեցին օսմեալ հայերուն, որոնք լքած Հայ Եկեղեցւոյ մայրենի ժողը, սառ վէմի մը վրայ խարսխեր են ինքզինք- նին : Հայ Եկեղեցւոյ զերագոյն մտահոգութիւններէն մին է Քրիստունը իր զաւակներէն իւրա- քանչւրին, իր իսկ ծոցին մէջ՝ Այս եղած է նպատակը այն մաքառութերուն զոր Հայ Եկե- ղեցին մզած է զարերով՝ քրիստոնէական զիւ- ցազնութեամբ : Կրօնական արտաքին ազգեցու- թեանց ողողութերուն զէմ: Կ'արգէ՞ր այս ամէնը անգամ մը ևս յիշեցնել Աւետիք խմբագրութեան . — կը խորհինք թէ այսու:

Հակառակ այս ըոլորին սակայն մեզի անհաս- կընալի կը մնայ հոգեկան այն սամկութիւնը և անփափկանկատ կերպը Աւետիքին, Բազմալեզ ին և նմաններու, որոնք հայ բարձրաստիճան Եկե- ղեցականներու մահերուն առթիւ, իբրեւ յաւ- ալակցութեան կը միացնեն այս կարգի զգացում- ներ, որոնց համար անգամ մը ևս կը յարտնենք մեր ցաւն ու վրզովը :

### ԽՄԲ.



## ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Այս տարի պատերազմի պատճառուի Զատիկի տանեցինք պատճեց ու խուռասորի Մեր ժողովուր, զը ամէն ատրի կուգար սասնալու համար Սիօ- նէն իր հոգեկան կազդոյրը ցաւալի է որ այս տարի գաղթաշխարհի զանազան կողմերէն այդ կենդանի վկայութիւնները չեկան միմիթարանիաւ և փսխագարձարար միմիթարելու այս նույրա- կան ժառանգութիւնը և Միմիթարեցէք, միմի- թարեցէք զմուսվուրդ իմ ասէ Տէր . . . և առ- տաւածաշնչական այս դատգամը ամէն տարի Կ'իրանար հոս, երախտաւոր Մեր նախնիքներու այս մեծ առնը մէջ, ուր կհանքի խորհուրդը ուրիշ ազգութեներով կը խօսի: Այս տարի, ձա- նօթ պատճառաներով, ինչպէս վերցիշեցինք, կա- րելի շեղաւ այս, սակայն անոր փսխարէն հայ սփիւռքը գրաւոր արտայայտութիւններով յայտ- նեց իր կարուոը այս բոլորին համար՝ որմէ կը զրկուէր այսպէս:

Մննդեան առթիւ, Ս. Այրէն ձայնասփիւռի մի- ջցաւ հազարդուած կրօնական արարողութիւնները և նորին Ա. Ա. Ա. Պատրիք Հօր հայրապե: տական պատգամը անծննման գոհունակութիւն և հոգեկան կազդոյր առթիւ էին ամենուրեք: Այս մասին ուրախ ենք յայտնեյու թէ Ս. Պատ- րիք Հայրը ստացած է բազմաթիւ դրու- թիւններ, Պոլսէն, Սիրիայէն, Լիբրանանէն, Ե- գիպոտուէն, Խորիուէն, Խրաքէն և Պարսկաս- տանէն: որոնք իրենց կարօտն ու գոհունակու- թիւնը կը բերեն Ս. Երկրէն բաշխուած Հայ Եկե- ղեցւոյ երգին: Այս սրտայոյդ վկայութիւնները արացոյցներ են թէ ո՞ր աստիճան զօրաւոր կը հնչէ Հայ Երուսալեմի շետու սփիւռքի հայու- թեան հոգիէն ներս, և այս Տէր կրնար ուրիշ կերպ ըլլաւ:

Այս վկայութիւնները հայ երգին ու ա- զօթքին նկատմամբ արտայայտուած, մեզ չեն տողաւորեր իրը անձնական նախնափրութեան մասնակի զդացութերու արտայայտութիւնը: Կը սիրենք զանոնք զդալի իրը այս ցեղին յաւիտե- նական ապրութերուն չետը, կերպարանքը, որ ասկաւին չէ օգոստած զժոխացին այս պայման- ներէն ներս: Հայաստանեայց Եկեղեցին անմահ խորհրդանշան է ընդհանուր աւերակութեան վիրե, միշտ գեղեցիկ ու միշտ գալուուն:

Ի՞նչ անոյշ զդացութենք կը պարօւնակեն այս տողերը կը, Պոլսէն Ս. Պատրիք Հօր գրուած նամակէ մը մէջքերուած, և Անցեալ շարժու Պոլսոյ թերթերէն իմացանք թէ Ե- րուսաղէմի սամփոկայանէն, թեթղեկէմի Ս. Այրէն Ծննդեան հայկական արարողութիւններ և Ս. Պատրիքացքին Ծննդեան պատգամը պիտի տրուի: Այտ գիշեր ըօլոր սատիի ունեցողները արթուռ մնացն, իսկ չունեցաները պատեկաներու տուն հաւաքառած էին:

... Զանգակներու խուր զօղանչին յաջորդեց 2երգ Սրբազնութեան Աւետարանի ընթերցումը . այն ինչ գեղեցիկ առաջանութիւն , ինչ անոյշ և քաղցր եղանակ ... բոլորս ալ յուզուած էինք . և այդ յուզումը նկատենի էր նաև 2եր մէջ : . . . ևսկ 2եր խօսքը ինչ հոյակապ և սքանչելի : որքան հայրական , բոլորին սրտին խօսով , լացողներ ալ կայինաւ : — Սրտազրաւ ու անոյշ են այս առաջերը , հայու քարեպաշտ՝ կրօնազգած նոգին կանչն է ասիկա , հազար տարիներու կենդանի վկայութիւնը : Արդարի չի մեռնիր այս ժողովուրդը երբ այսքան մօտ է սրտած իր հոգիկոն արծէքներուն , իր անցեալին , երկնքին : Կը շարունակէ նամակագիրը « . . . Ամանք ուստիոյին առջի ինկամաններ զբեր և մամիր վասներ են , ուրիշներ ձնկաչոք ազօթեր են , և շատիր յացեր են . . . : Տակաւին՝ ռուախոյ ռւնեցող առներ , ժիւն ու ցուրտ գիշերուան մէջ , բացեր են իրենց տան պատուհանները որ չունեցազները յանուն : Տակաւին՝ զիշերուան այդ ժամուն բըժիշկ մը սիսոյզ հիւանդէ մը կը վերագանայ եղեր , երբ կը լսէ երգեցազութիւնը վար կ'իշնէ սիթոյէն և ձիւնին տակ , պատին կրթնած կ'ունի կը նորէ երգեցազութիւնը : Այս բոլորը այլիս պարզ նախասիրութիւններ կամ նախընտրու . թիւններ չեն , այլ համբուրելի նոյն նոգին արտայալաւութեան կերպեր , հոգեկան ամբարուած ոյժի մը . քիչ մը պարզաւէ , բայց յուզիչ երեսումներ , գոր բացարձու զմուարէ և բացարձու զմէնչ և զանձկութիւնն քո Հոգին Առուրը յաջողենցէ : Հուսկ յիտ սմին տրուալ ծառայ ծառայից քոց նուաստ նդիաս յուշ տոնեմ զտեղացու և զայլ ուրիշ եղելոցն զորպիսութիւնն , զի թէպէտ յառաջազոյն զիր զրեալ մեր հանգերձ Բոտամպօլու եկեալ գրեանց դաշմատացոց սայիօմթ ի փեռուարի ժե . ուրբաժի օրն ուղարկեցաք առ հրամանքդ , բայց այժմ նարգեանս որում աւուր ի տօնի Սրբոյն թէոզոսի մետաստներորդ ժամու եկն օրնութեան գիրդ , և մեր ի միւս աւուր կիրակէի զայր զրեալ և ծանուցեալ , որ վասն Շամայ փաշային ասմին՝ թէ ձ . հոգի թային արաքեալ , թէ վայ ի տեկո , լաւեալ թէ գնացեր ես , զձայն գողացեր , այլ բնաւ խապար մի չկայ : Եւ ձայն մի այլ լսեցաք՝ թէ Սուլէյման աղան զերէցն ինճիթմիշ կ'ուզէ անէ՝ թէ գու զիր զրեցիր նորա , որ նա ելաւ փախաւ և ես փաշին մօտն սուտ անկայ : Եւ Բատամպօլու այն զրեանքն էր , զոր յառաջազոյն ուշով ուղարկեցաք և թէքրար երկու թուզթ ուլլ Մօրայ ուլախուզ եկեր Բաէմլու անցեր ի Պազէ գնացեր , և յունաց ևս զիր կայ եւ զեր ի հետ նոյն ուղարկեն Դազէտ . ըզյունաց զիրն ուղարկեր են և զմիրն ոչ , թէ հայուն միծն ի տեղն չէ տէին չէ սուեր ու լախն . և այլ խապար մի և զրուց մի չենք լսած : Եւ մեր փաշան կայ ի նապուլուս

Հայ կրօնական երգին ազգեցաւթիւնը տարբեր է անշուշտ երբ կը բիսի սրբավայրէ մը , որ հարիւրաւոր տարիներու կեանքն ունի , և ուր անցմար պահուած է յեղին տիրական չեշար . այն հայեցի անուշութիւնը՝ սրով տոգորուած է հայ ստեղծագրծութիւնը իր բոլոր իրաւում մըն է հայ երաժշտութիւնը մեր հազարմայ վշտով օծուն երբ իր ամենաներու վրայ : Արիւնի և հոգին ինչ միտիք բիսի բայց անձանական , որ սոսի շղաքչի մը պէս ծփանուտ կ'իշնէ մեր հոգիներուն , ամո քելուփայսկիերպ յաւիտենական պատուքը ոգեզէն խոռովըն :

Երգն ու ազօթքը հայուն , արեան , ցեղի և դարաւոր ժառանգութեան կնիքովը ծանրագրուած երկիր վրայ իսկ երկանամ են : Այս երբ ըսուին ու երգուին քրիստոնէական մայրաքաղաքէն , ուր կրօնքին միտիք բանաստեղծութիւնը մի ու թափ կուտայ հոգիներուն , և օրանք բառերուն , այն ատեն հայ երգին ու ազօթքին զգացունի ու կարօտը զմայլագին տրամութեամբ ու քաղցրութեամբ կը խօսէ հոգիները :

Գաղթաշխարհը կարօտ է այս բոլորին , վասն զի զրկուած է այս բոլորէն : Եւ այս չի բիսիր միայն նիւթական անկարելիութենէ մը , այլ նաև հոգեկան այլուրութենէն :

ԽԱՄԲ.

## ԴԻՄԸ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԵԵ

(Եղիա եպիսկոպոս Երևանին առ Եղիակար կարողիկոս ի Տիմիար) (\*):

Ենորհաղարդ հօր մերում Տեսոնդ վեհի ծառայ քո և սուրբ ուխտիս սպասաւորք հանդերձ Տեան Աստուածատրոյ վարդապետիւ ամենեցեանս երկրպագեալ տուածի մեծանձնութեանդ ողջոյն մատուցանմք և հարցանեմք զորպիսութիւնդ տարանցատելոյդ զմէնչ և զանձկութիւնն ճառնապարհիք , զոր Տէր Աստուած զգարձն քու մեղ և առ տունս սուրբ բարեաւ տուածնորդեսցէ և զառաջակայ զրարեուզալացնցութիւնս քո Հոգին Առուրը յաջողենցէ : Հուսկ յիտ սմին տրուալ ծառայ ծառայից զտեղացու և զայլ ուրիշ եղելոցն զորպիսութիւնն , զի թէպէտ յառաջազոյն զիր զրեալ մեր հանգերձ Բոտամպօլու եկեալ գրեանց դաշմատացոց սայիօմթ ի փեռուարի ժե . ուրբաժի օրն ուղարկեցաք առ հրամանքդ , բայց այժմ նարգեանս որում աւուր ի տօնի Սրբոյն թէոզոսի մետաստներորդ ժամու եկն օրնութեան գիրդ , և մեր ի միւս աւուր կիրակէի զայր զրեալ և ծանուցեալ , որ վասն Շամայ փաշային ասմին՝ թէ ձ . հոգի թային արաքեալ , թէ վայ ի տեկո , լաւեալ թէ գնացեր ես , զձայն գողացեր , այլ բնաւ խապար մի չկայ : Եւ ձայն մի այլ լսեցաք՝ թէ Սուլէյման աղան զերէցն ինճիթմիշ կ'ուզէ անէ՝ թէ գու զիր զրեցիր նորա , որ նա ելաւ փախաւ և ես փաշին մօտն սուտ անկայ : Եւ Բատամպօլու այն զրեանքն էր , զոր յառաջազոյն ուշով ուղարկեցաք և թէքրար երկու թուզթ ուլլ Մօրայ ուլախուզ եկեր Բաէմլու անցեր ի Պազէ գնացեր , և յունաց ևս զիր կայ եւ զեր ի հետ նոյն ուղարկեն Դազէտ . ըզյունաց զիրն ուղարկեր են և զմիրն ոչ , թէ հայուն միծն ի տեղն չէ տէին չէ սուեր ու լախն . և այլ խապար մի և զրուց մի չենք լսած : Եւ մեր փաշան կայ ի նապուլուս

(\*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերապիրն է . «Եղիա եպիսկոպոս կարողիկոս ի Տիմիար»

նստած, գնալու վրայ է, խապար է ուղարկեր վանքերուն, թէ զաշ. և մալոթակ'ուղէ. յոյնք և լատինք գէմ են կանդնած՝ թէ չենք խտար. վաղն մէկալ օրն այսքան պայրամլըին ողիտի, զո՞ր մէկն տամք. թէ նոքա զինչ որ անհն' և մեք ընդ նոսաւեւ յառաջ ուղարկած թուղթն զրեցաք՝ թէ զատին ո՛րքան հակառակեցաւ ընդ մեզ, թէ նա փաստական է, ես զվանքն ա՛յնտէս կ'անեմ, և ա՛յնպէս կ'անեմ: Յունաց մեծն ժարդ էր ուղարկեր՝ թէ եկէք քանի մի փող յաչքն կոխեցէք, աւելի պակաս զրուցատ կ'անէ. մեք այլ նորա խօսիւքն ձ՛Յ. զոշ. աբւաք, հազիւ լոկցուցաք, զեռ կու գոմիստայ: Եւ եկեալ ուխտաւորքն յետ գնալն քում՝ փարա քէսէ վասն ճանապարհ զումիմն զեռ մինչ ցայսօր երկուքէ երեքէ կու գան, և այնպիսի պէլի պաշլի մարդ չկայ բայց մէկ քսան հողի են կիւոցի խզան ժան և քանի մի Հըռըմու և քանի մի թախաթու, Սեւաստու և այլ որիշ տեղաց, բայց Բաղէշու և Վանայ դեռ չեն եկած. կ'ասեն՝ թէ խէյլի ուխտաւորք կան զալու, ապա այժմ յայտնի չէ, և զտանս զառն և զտուրն նէշէ տեղ մեծ և փոքր տալիք կայ, որ կու գան կու նեղացնեն զմեզ, որպէս որ քէհիին տղոցն Բթէ. (230) զոշ, որ միշտ կու գան կ'երթան և թէ Շէհրէ երկթին և Պալապաշէ մօրն և այլ սոյնպիսեաց, զո՞ր ոչ գիր ունին և ոչ հրամանքդ առ մեզ պատուիրեցիր՝ թէ տաս. պէլի ինչ որ ի յառաջին թղթի մէջն գրեր եկը՝ թէ տաս, բարի է, բայց զմացելոյն՝ առանց հրամանի վիճիդ ոչ կարեմ փող մի հատուցանել: Եւ գարձեալ Ըստեփո ծառայէդ ողջոյն և երկըրպագութիւն վեհիդ իմում, որ վասն իմս գրեր ես՝ թէ թօ՛զ զգիրքն առնոււ և ժամանէ. թէ հնար էր՝ թե առեալ կու թաէի, բայց ճանապարհի զէնվան ոչ հմուտ լինելոյ յաղագի չկարացի գալոյ, և թէ զմալս իմ և չգալս ի միասին՝ արբեցութիւնն եղեւ պատճառ, և կու սպասէի միոյ նուազի և այժմ լուայ, զոր կրկին խնգրեր ես՝ թէ գայ, ի հետ սէուս չեմ կարեր գալ, զի սա շեշտակի է, ահա ես յետ միոյ առուր ի հետ հանցն գալոց եմ՝ թէ Տէր կամեսցի, և մինչ ի Ղաթեա գամ, թէ տեսնում, թէ զապի է, միայնակ թինէով կու ժամանեմ աետանդ իմում, և թէ զապի չի լինայ թինէով, ի Մսըր կու զնամ և անտի Սատու-

ծով հուալ ընդ հուալ տեսանելոց եմք զիւրեարս. և թէ հնար է, զիր զրես ի Մսըր, յորժամ զամ նա զի թէ զով առ զենզ հաւսուցանեն, և թէ զապի չի, զիշխանն ի Դաթեա ի պէմս ուղարկես, որ եկեալ առցէ զիս. չուտով յառաջեցուցես զիշխանն, զի ես լինայ թէ թէզով ժամանեմ ի Թաղեա:

Դրեցաւ փետրուարի իւ. [1667]

## ԼԶ

(Սովոր եպիսկոպոս Երուսաղեմի առնդիակար կարողիկոս ի Հալիք) (\*):

Պատուականագոյն հարց. և սրբազն չայրապետաց, երջանկափառ բաբունեաց տեառնդ մերոյ վիճի և հոգեոր հօր հարազատի, այլ մեծարզոյ պետի և զիտապետի տանս սրբոյ՝ մեծ և փոքր կարգաւորք և մահուսիք առ հասարակ ամեննեքեան խոնարհեալ երկիր պազանեմք առաջի ձեր և երես անկեալ հարցանեմք զզիարդն և զորպէսն ձեր, զոր Տէր Սստուած խաղաղութեամբ յաջողեսցէ զառաջակայ զբարի և զսիրոյ զիսորուրզոս և զգործոս ձեր: Եւ թէ զմերմէ իրակութենէ լիցի հարցումն ի սուրբ հարց՝ ամեննեքեանս ազօթս առեալ, զձեռս մեր վերաբարձեալ, լալագին զիմօք և կողկողագին հեծեծ անօք աղաչեմք զմստուած, զի տացէ ի միջի ձերում սէր և հաշտութիւն և բոլոր Հայաստանեայց ազգիս խաղաղութիւն և սուրբ տանս յանդորրութիւն և շինութիւն: Այլ և զայս յատկապէս ծանուցանեմ հրամանուցգ, հոգեորբէ՛ր, ծառայ քս Եղիաս վասն տանս որպիսութեանն, թէ զախիրայէ պակասութեանն և թէ քազաքիս ամենայն իրաց սղութեանն, յորեան սասես՝ հատ մի չկայ, մէկ երեսով զոշ. ելաւ զինն քիլէն՝ չենք կարեր առնել. և այն նոյնպէս, թէ զէթոնն և թէ խաղողն այս տարի սակաւ է: Եւ թէ քաղաքիս բռնաւորաց կողմանէ և շիներաց՝ լաւ են, և նոր զատին յաւնիսի ժթ. եմուտ ի քաղաքս, կանաչ գլուխ է և շինտիլիկ աղէկ մարդ

(\*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնազիրն է. «Երուսաղեմայ միարանից զիրն է, յետ ելանելոյն մեր ի կիպրոսէ ի Հալիք՝ վասն լողմի իրեանց»:

կ'երեայ. Նայիւզն Պէրպէրգատէ նայիւզն է, լաւ մէկ մի է, և մօլլային համար կ'առ սեն՝ թէ նաքիպին փեսան է և բնաւ դուրս ելած չէ, և Բառմատան միւսէլլիմն ի հետ մեր աղէկ է և ազգերն եւս սիրով են ընդ մեզ քոյն սուրբ աղօթիւքը, գոհութիւն Աստուծոյ, և սուրբ ատան միաբանքն մեծ և փոքր սիրով են ընդ իրեարու և մեզ հնագանդ։ Այլ և զայս յացա առնեմ սուրբ հօրդ, զի յունաց ազգի միծն՝ տէսպօտի Եկատափասն հրամանուցդ յոյժ թափանձանօք և սիրով ոզջայն մատուցանէ և զորպիտութիւնդ հարցանելով հարցանէ, և զայս խզմէթս և լաւութիւնս իննդրէ ի քէն, զի լրսեալ թէ չուխայի նաւեր եկեր, խիստ գերեկցաւ և զայս զիրս վամն այն հրամանուցդ ուղարկեաց, որ ի հասանել թզթիս իւրեան եծ. (500) զաշ. ի չուխա առեալ ուղարկես. և ի մեր զիրայ թէպէտ եծ. զաշ. ունէր, որ վասն տանս պակասութեանն փոխ առեալ էաք ի նմանէ, զնա չի յիշեց. թո՛ղ զչուխան ուղարկէ հոգեսրտէրն, թէ ձեզ զրամ պիտինայ, ես կու տամ, ասաց: Թէրէմ անես, հոգեսր հա՛յր, էհմալ չանես, զի սորա լաւութիւնն ի սուրբ տանս և ի մեր զիրայ բազում է, քանի հրամանքդ ի տանէս բաժաներ ես, օր մի զմեր և զմիարանիցն զիսաթրն առանց հարցանելոյ թողած չէ. Աստուծած իւրն և հրամանուցդ կինդանութիւն չնորհէ: Եւ զարձեալ՝ որպէս որ հրամանքդ Տիմիաթու առ մեզ զիր էիր զրեր՝ թէ տանդ զախիրի ինչ պակասութիւն լինայ՝ Խօճա Վասիլին թուղթ զրեցէք, որ նա ուղարկէ: Մօտ ժամանակիս յունաց մեծին ասաք, որ նա ինք իւր ձեռովն թուղթ զրեց ի վերայ Վասիլին՝ թէ հայոց աղզին բակլա, ոսպ, սիսեռ և թէ բրինձ որբան պիտոյ է՝ նոցա ուղարկես. յոյս ունիմ, որ յետ քանի մի աւուր զայ: Եւ մեր ամենեցուն սիրտն ի գող է՝ թէ աճապա ի ձենէ ինչ խապար մի կուգայ, զիշեր և ցերեկ աշերնիս ի ճանապարհ է: Վասն Աստուծոյ զմեզ անմիսիթար չթողուս, չուտով աւետեաց և ուրախութեան գիր մի ուղարկես, որ մեք այլ լուեալ զձեր ուերն և միաբանութիւնն իննդամք և ուրախանամք: Եւ յունաց աղզին չուխային հոգ լինաս և նոցա կրկին զիր մի այլ, որպէս որ հրամանուցդ է հաճոյ՝ զրեալ ուղարկես, զի յոյժ կաթոգին սիրով վափաքի և տենչայ վասն

տեսութեան տեանդ իմոյ: Դարձեալ և վասն տանս խզմէթի զիրայ հոգաբարձու լինօղ և մեզ ձեռընտաւ մէկ մի չկայ. աղաչեմ՝ որ զմահոկեսի Վարդանն շուտով ուղարկես, քանզի զմուտ և զիլ սուրբ տանս հմուտ և տեղեակ է: Սուքիսա վարդապետին, Մինաս վարդապետին, Ներսէս տիրացուին և այլ միաբանիցն յոյժ սիրով ողջոյն: Դրեցաւ լունիսի ի. [1667]: Հա՛յր սուրբ, յաղագս յաւնաց խզմէթին, որ վասն չուխային որ առ քեզ յանձնեցին, առաւելոյ(?) էր ընդ հրամանքդ, զի զրիս բերողն Փառանդ էր, նոցա թէնէզուլ և մուննէթ չարար մեծն, վասն որոյ առ քեզ յանձնեաց՝ թէ նա իմ սրգի և սիրելի է, ես նորա կու յանձնեմ զայս մէկ խզմէթս:

## Լ

(Մարտիրոս վարդապետ Գրիմեցի Հաւելին առ Խօճա Էմիլրա ի Կ. Պոլիս)(\*)

Դարձեալ զայս զիտասչիք Խօճա Իմիրշա և Պարոն Խոսրով, ահա զեղիազարի առ իս ուղարկած զրին սուրբաթն այդ է, զոր տեսանէք: Եթէ ասիցէք՝ թէ այս զրի մէջն փոր կշտանալոյ խօսք չկայ, մեք զայն դրամի խօսքն իւրեան բերանով էաք պատուիրեալ, նոյնպէս և նա պատուիրեալ էր բանիւ թզթաբերիս, ասելով՝ թէ այնչափ մինայ որ անգամ մի տեսանեմք զմիմեանս. նորտ պարտքն իմ է, ես ու նա միայն զիտենամք. ինչ իւլազը որ աշխարհ զիտենայ, զմեզ տիլէմիշ անէ, միթէ ես չե՞մ զիտեր զնորա պարտքն ունենալն: Զայս և այլ բազում սոյնպիսիս յանձն առեալ էր, վասն այն ելեալ եկի ի քաղաքս՝ թէ մէկ հնար մի լինենայ մեր պարտուցն: Զի՞նչ առնեմ, այնչափ զրամ ու փող մսխեցաք, ամէնն անօգուտ և տարաժամ ատենի եղե, որ փողու մի շահու չեղեւ: Թէ հիմայ ես զձեզ պատճառեմ, գուք զիս զնէք պատճառ. ի՞նչ շահ լինենայ երկոցունցն: Նա իսէ ունի ձեռքն այնչափ մալ ու պարանք. զինքն զին մի կորցնելու ֆուրսանթ մի

(\*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վիրնագիրն է. «Մարտիրոս վարդապետն զրեալ ի Հալապայ զգիրն իմիրզային վասն հաշտութեան խրատոյն».

չանկաւ ձեռվեխու։ Օսմանցու դուռն լաւ գիտեմք, ով որ զրամով զնայ՝ բանն չուտ կու շինվեր Տեսի՛ որ այլ կերպին հնար չեղե, դուք այլ մնացիք այգափէս խեղճ պարտատիրաց ձեռքն, վասն որոյ զայս հնարեցայ. ճիշէնէմէ զիւր զլուխն, զայ տեղս, հաշտութիւն մի լինի, կէս մի պարտուց ճարէ տայ, կէս մի այլ զրոէ աստի անտի ժողովք նուրիրակութիւն առնելով՝ ազատութեան հնար մի գտանեմք. մանաւանդ որ աշխարհ ամենայն ի վրդովմանէ կու աշգատի։ Հիմա քանի որ այս ազմուէս ի մէջնին կայ, թէ հրեշտակ Աստուծոյ գնայ, երկու փող մէկէ մի ուղելու ճար չկայ, և թէ տեղաց մի պարտք անելու ջանամք՝ հինգ դու. մարդ չի աւտար տալու։ Ոչ միայն պարտք, այլ և բազում տեղիք կայ, որ զգանձանակն հետ կու պահեն չեն իտար, որպէս որ ահա Տիարպէքիթ չորս հինգ տաշրէն զանձանակ զայ, փող չեն ուղարկեր ոչ ինձ և ոչ նորա, ասելով՝ թէ մինչ որ մէկ դին չեղնայ կամ խաղաղութիւն փող չեմք իտար։ Ահա՛, սիրելիք իմ, այսքան խանարհին և խաղաղութիւն խնդրելն այդ պարտուցն համար է և զծեզ ազատելու ի պարտուցն։ Եւ եթէ թէ մեք քեղանէ սըխւաթով զրամ չեմք ուղեր, սախըն դու զնա մի մօտեցներ այդ կերպիւն. ինձի զիր դրեցէք, որ ես այլ ամուռ կենամ, զնա չի մօտեցնեմ։ Այնչափ միտք ու ֆիքք արարի, քան զայս առաւել ճար չի դտի. եթէ Դուք այլ իմ կերպ ճար կու զիտէք, ասացէք զի արարից։ Եթէ իւրեան կորցընելու ճար կենար, իսկի կոծ չէք, Աստուած ողորմած էք. այնուհետեւ թէ ուստի որ պարուք ու փոխ զրամ ուղէաք՝ թէ ֆուանկաց, թէ յունաց և թէ թուրքից՝ կու տայն։ Բայց այժմ այնուհեցուն բերանն կայ, թէ նա քանի սոկի արծաթ ունի, վաղն կու զնայ՝ կ'առնէ կու զայ, ասելով, մէկ ըստակ չեն խոր։ Վասն որոյ զայս իմացայ հնար. եթէ դուք այլ իմ շահաւետ իրատ կու զիտէք՝ արարէք զմեղ խելամուտ և ես հետեւեցայց խորհրդոց ձերոց։ Ահա այժմ այնուհետեւ մոտօք սպասեմք զալստեան նորա. և եթէ Աստուած տօնօրինէ որ գայ, ինչ կերպիւն խօսք որ զրուց որ լինենայ ի մէջ մեր, նա՛ այն կերպիւն փութով ծանուցանեմք առ ձեզ։ Մանաւանդ որ հոգեորտիրին մարդ կ'ուղարկեմք, որ

իզմիրու և ի քաղաքէդ ուխտաւորք ժողովէ զայ այս տարօվս Երևանաղէմ և լինի կատարեալ ուէր և հաշտութիւն և զագարի աշխարհ ի վրդովմանէ։ Մեր միտքն այս է՝ թէ գայ, ասպա թէ ստէ, այսուհետու այլ իմն խորհուրդ, զօր ինչ պատշաճն է, խորհեալ չուտով առ ձեզ կու զրեմք։ Խիստ որ երկարէ մինչ Վարդագավա յաշտնի կու լինի թէ ինչ կերպ որ լինելոց է։ Բայց զուք զտեղւոյդ որպիսութիւնն, կամ թէ Յակով Վարդապետն իզմիր զի՞նչ զործ յառաջնոց՝ մի ըստ միուջէ զրեսչիք և զհոգեորտիրի ինչ բանի վերայ լինալն և զայնի կարգի ծանուցէք։ Դարձեալ հարկ դնէք հոգեորտիրին վերայ, որ ամենայն աշխարհք զիր թող զրէ հրաւիրական՝ թէ ես երուսաղէմ կու զնամ, զուք այլ որչափ երեւելի տաւլաթավորք կայք՝ զայք այս տարի Եւրուսաղէմ, մանաւանդ յերեւելից աշխարհն։ Թո՞ղ թէ խաղաղութիւն լինի չլինի, թող հոգեորտիրի զիրն այլ զնայ. և թէ լինի խաղաղութիւն ըստ միրոյ կամացն նա՛ մեք ես կու զրեմք աստի յամենայն տեղիս գիր։ Միթէ բարերարն Աստուած զրտիրն առաջնորդեսցէ և կամք իւր օրհնեալ եղիցի. ամէն [1667]։

Հատարակեց՝ Ա. Ե. Ե.

#### Կ Ո Ր Պ Ա Շ Տ Ո Ւ Ե Ե Ր

Ա. Աթոռոյու մէջ, պաշտօնի հետեւեալ փոփոխութիւնները տեղի ունեցան անցեալ ամիսներու ընթացքին Հոգ. Տ. Շնորհք Վրդ. բնարուած ըլլուսի անդամ Ցնորէն Փաղումոյ Հայֆայէն վերագրծու վանք, իր տեղ Հոգեոր Հոգիւ Աշունակուեցաւ Տ. Յուսիկ Վրդ.։ Ա. Հրեշտակապետց վանուց նախկին անուչը Սոյն վանուց տեղային իշխանութեաց Յեմդղէնէմի վանուց տեսուչ։ Տ. Սուրէն Վրդ. ի, որուն տեղ նոյն հաստատութեան տեսուչ նշանակուեցաւ Տ. Վերոն Վրդ.։ Ցնորէն Փաղումոյ նախկին անդամներէն։ Հայֆայի Եկեղեցւոյ ժամարաք զրկուեցաւ հայերէն թղթակցութեանց զիւանագափիր Տ. Յակով Արեգայի տեղ անդամներէն։ Եաւ Արագած Վրդ. ի, հրաժարած արագուու վաստակած Վ. Վազգան Արեգայի հրաժարած ըլլուսի ժամարաք զրկուեցաւ հայերէն թղթակցունէն, հոչուեցաւ թարգմանութեան պաշտօնին Տ. Պահկ Վրդ. ի տեղ. որ անդամ ընտրուած էր Ցնորէն Փաղումոյ։ Ժամարաք. ի փախառեալ մեան պաշտօնին կոչուեցաւ Տ. Զաւէն Արեգայի, որուն տեղ մատակարար նշանակուեցաւ Տ. Կոմիտաս Արեգան։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Կը խորհիմ թէ, միջին հայ անհատին մօս կարեսը բան կը պատկի որ կարելի է կոչել գործնական ազգասիրութիւնը:

Բոլորս ալ տևեի կամ նուազ չափով կը սիրենք մեր ազգը, բայց սիրելը բան մը, և այս սէրը մեր կեանքին բոլոր երեսներուն վրայ գործնականապէս արտայայտելը բոլորավին ուրիշ բան մըն է:

Գործնական ազգասիրութիւնը կը պահանջէ ամէն բանէ առաջ զոհողութիւն: Բայց զօհողութիւն ըսելով պէտք չ' անպատճառ կամ միայն նիւթական զանողութիւն հասկնալ: Ամէն մարդ կրնայ զրամ չունինալ ազգին տալու համար, բայց ամէն մարդ իր լաւագոյնէն բաժին մը կրնայ հանել և տալ իր ազգին: կարեսը ազգին տալ կամ անոր նուրբութիւն է: Տալ գիտնալ, տալու վարժութիւն և սիրով տալ պէտք է ուղրինք: Ամէն հայու պարտականութիւնն է սիրել իր Ազգը, հպարտ ըլլալ, և ոչ թէ ամօթ զգալ այս ազգին զաւակ ըլլալուն:

Ճիշդ է որ մենք շատ փոքր ազգ մըն ենք, անտէր և անհայրենիք: ու այս պատճառով շատ անզամ կարգ մը ասպարէզներու մէջ մեր յառաջդիմութեան կարծէք թէ խոչնդոս կը դառնայ մեր աղջութեան արդ նկարագիրը: Արտակարգ կարողութիւն պէտք է շատ անզամ հայուն համար կարենալ այս տեսակ ասպարէզներու մէջ յառաջդիմելու: բայց մոռնալու չ' որ աղքատին զաւակն ալ յառաջարկէմ է յաճախ: Եթէ մենք ազգովին աղքատ ենք, այս աղքատութիւնը պէտք է մեզ մզէ տասնապատկելու մեր ձիգերը զմեզ լաւագոյն արժանիքներով և կարողութիւններով օժտելու համար, որպէսզի մեր անձնական արժանիքներով կարենանք ձեռք բերել այն յաջողութիւնները՝ որ ուրիշներ հարստութեամբ կամ ազգային պաշտպանութեամբ ձեռք կը բերեն: Հետեարար իմ համոզումովս գործնական ազգասիրութիւնը կը պահանջէ երկու բան: Առաջին զօհողութիւնը իր ազգին համար: Երկրորդ՝ ինքնազարգացում՝ գործնական իր ազգին համար:

Գիտենք որ հայը միշտ առած է և կու

տայ Ազգին: Այս, մեծութ փոքրը հարուսան ու աղքատը տուած են միշտ իրենց լուման, մանաւանդ երբ աղեաներ եկած ե պայթած են Ազգին զլխուն: բայց ինձ այն պէս կը թուի որ ազգային մեծ բարերարներու և ազգաւերներու թիւը հետզհետէ կը նուռզի: միջին հայը գվելամակելով սկսած է տալ: ինչո՞ւ արդեօք այսպէս է:

Բայտ իս, Կիլաւոր պատճառներն են հետեւալները.

1) Կեանքի պայտքարը սաստկացած է և այդ բուսն պայտքարին մէջ հայը կարող չէ այլն զրամ շահիւ ան զիւրութեամբ որով նա կը շահէր այդ զրամը անցեալին մէջ:

2) Կեանքի պահանջքները բազմապատշուած են, այնպէս որ հայը նոյնիսկ եթէ, բազմատմամբ անցեալ ժամանակներուն, շատ աւելին շահէր, այսօր գարծեալ հաշգիւ պիտի կրնար իր օրուան պէտքերը գոհացնել:

3) Ուրիշ ազգեր կու տան սիրով իրենց ազգին անոր համար որ անոնք իրենց տուածին փոխարէնը կ'ստանան. երբ, օրինակի համար, ազգի մը անկախութեան սպառնալիք ըլլայ, կը տեսնէք որ այդ ազգին զաւակները ահագին զօհողութիւններ կ'ընեն սիրով, բայց անոնք իրենց զօհողութեանց արդիւնքը կը վայելեն, իրենց տուածին փոխարէնը կ'ստանան իրենց անկախութիւնը փրկելով:

Որդ, ինչ որ ալ ըլլայ կեանքի պայտքարը և գարուն պահանջքները, հայը պէտք է զիւնայ որ պարտականութիւն ունի իր աղքին հանդէպ, ինչպէս իր ծնողաց կամ ընտանիքին հանդէպ: Եթէ իր շահածը անբաւական է, ան պէտք է ձիգ մը ընէ աւելին կարենալ շահէրու համար, որպէսզի իր շահածէն բաժին մըն ալ կարենայ հանել իր աղքին: Կամքի տէր մարդիկ որքան ալ զգան կեանքի բեռը ծանրացած, այնքան աւելի կ'աշխատախին և կը յառաջդիմեն. այնպէս որ շատ անզամ անոնք զգացած ու խոստավանած են թէ այնքան յառաջդիմած պիտի ըլլային, եթէ իրենց կեանքին բեռը այնքան ծանր եղած ըլլար:

Չվախնանք ուրիշն մեր բեռը քիչիկ մը ծանրացնելէ ազգային տուրքերով, անոնք

մեղ մզում կրնան տալ աւելի աշխատելու  
և յառաջդիմելու:

Յետոյ, բնական է անշուշտ, որ ճարդ  
վհատի երբ շարունակ տայ և փոխարէնը  
չ'ստանայ, բայց մենք պէտք է տանք մեր  
աղջին, այն գիտակցութեամբ որ մեր տուա-  
ծին փոխարէնը չենք կրնար շուտով ստա-  
նալ: Երբ անմիջական արդիւնք չսպասինք  
չենք վհատիր:

Գանք այժմ ի՞նքնազարգացման:

Մենք, պէտք ենք զմիզ հետզհետէ և  
օրէ օր աւելի զարդացնել. ինչ որ ալ ըլ-  
լայ, մեր ասպարէզը, մեր արուեստը կամ  
արենասը, մենք մեր կարողութիւնները  
պէտք է մշակենք: Ամէն անցնող օր մեր  
